ԻՍՈՒՎԱՆ (ԾՈՓՔԸ) Մ. Թ. Ա. XIII—XII ԴԱՐԵՐՈՒՄ

Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Մ. թ. ա. II հազարամյակում—I հազարամյակի առաջին կեսին համաժամանակյա գրավոր աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում վկայված է Իսուվա պետությունը։ Այն հիշատակվում է խեթական, ասորեստանյան և ուրարտական սեպագիր աղբյուրներում շուրջ մեկ հազարամյակ (մ.թ. ա. XVII—VII դդ.)։ Այնուհետև այս երկրանունը շարունակել է գոյատևել անտիկ և վաղ միջնադարյան հայկական աղբյուրներում Ծոփք և Սոփք ձևերով։ Դժվար է ասել, թե որքանով է համապատասխանում սեպագրական Իսուվայի տարածքը հին հայկական Ծոփքին։ Իսուվան մոտավորապես տեղադրվում է Եփրատի հետ Արածանիի միախառնման հատվածում (այսօրվա Էլյազըղի շրջան)[1]։

Իսուվան կարևոր դեր է խաղացել մ. թ. ա. XVII—XIII դդ. իր ռազմավարական դիրքի և այստեղ գտնվող հարուստ պղնձահանքերի (Էրգանի Մադեն) շնորհիվ։ Իսուվայի վերաբերյալ մեր տեղեկությունների հիմնական մասը գալիս է խեթական աղբյուրներից։ Դրանց և այլ աղբյուրների ուսումնասիրությունը[2] թույլ է տալիս եզրակացնելու, որ, գտնվելով հնագույն Առաջավոր Ասիայի երկու կարևորագույն քաղաքական-մշակութային կենտրոնների՝ Միջագետքի և Փոքր Ասիայի մերձավորությամբ, Իսուվան ողջ ուշբրոնզեդարի ընթացքում մշտապես եղել է երկու գերտերությունների քաղաքական և տնտեսական շահերի կիզակետում, սկզբում՝ Միտաննիի ու Խեթական տերության (մ. թ. ա. XVII—XIV դարեր), այնուհետև՝ Խեթական տերության և Ասորեստանի (մ. թ. ա. XIII դար)։ Նշված դարաշրջանում Իսուվան նախ միտաննամետ դիրքորոշում է ունեցել, իսկ մ. թ. ա. XIV դարի կեսերից, երբ Միտաննին, իսկ մինչ այդ նաև Իսուվան, նվաճվեցին խեթերի կողմից, այն վերածվում է Խեթական տերության հենակետի արևելքում։

Առկա փոքրաթիվ ուսումնասիրություններում հիմնականում ներկայացված է Իսուվան հիշատակող աղբյուրների պատմական նյութի օբյեկտիվ շարադրանքը, հագեցված որոշ պատմագիտական եզրակացություններով։ Սույն հոդվածի նպատակն է վերականգնել այս պետության պատմության այն դարաշրջանը, որի ընթացքում վերինեփրատյան տարածաշրջանում քաղաքական, էթնիկական և այլ բնույթի մեծ փոփոխություններ են վկայված, և որոնք դեռևս գրեթե արտացոլված չեն Իսուվայի պատմության հարցերին նվիրված ուսումնասիրություններում։ Խոսքը մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամի շրջանում Հայկական լեռնաշխարհը չշրջանցած քաղաքական վայրիվերումների և էթնիկական տեղաշարժերի մասին է։ Փորձ կարվի ներկայացնել իրավիճակը Իսուվայում նախքան ճգնաժամը և դրա հետևանքները

---

[1] G. F. del Monte und J. Tischler. Die Orts- und Gewassernamen der hethitischen Texte (RGTC 6). Wiesbaden, 1978, S. 155.

[2] *Իսուվային առնչվող խեթական աղբյուրների ուսումնասիրությունը տե՛ս* H. Klengel. Zum Brief eines Konigs von Ḫanigalba: (IBoT I 34). — Orientalia 32, fasc. 3, 1963, S. 280—291; idem. Die Hethiter und Isuwa. — OA 7, 1968, S. 63—76; idem. Nochmals zu Isuwa. — OA 15, 1976, S. 85—89.

այստեղ և մերձակա հարևանությամբ գտնվող քաղաքական միավորներում։ Առկա աղբյուրներում պահպանված տեղեկությունների բնույթից ելնելով, կքննարկվեն հետևյալ հարցերը՝ Իսուվայի արքայատոհմը, Իսուվան մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին ընթացած խեթա-ասորեստանյան հակամարտության շրջանում և Իսուվան մ. թ. ա. XII դարի ճգնաժամի փուլում։ Վերոհիշյալ խնդիրները կդիտվեն Առաջավոր Ասիայի համաժամանակյա պատմության լայն համատեքստի վրա։

ԻՍՈՒՎԱՅԻ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԸ

Խեթական աղբյուրները պահպանել են Իսուվայի միայն երկու արքաների անուններ՝ Արի-շարրուման և նրա որդի Էխլի-շարրուման (խեթական արքաներ Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի ժամանակակիցները)։ Սրանց վերաբերող տեքստային նյութը շատ սուղ է և հանգում է ընդամենը մի քանի հպանցիկ հիշատակությունների[3]։ 1968—1970 թթ. Էլյազղի շրջանի հայտնի հնավայր Կորուջութեփեից հայտնաբերված մի քանի հիերոգլիֆային կնիքների դաջվածքները[4] լրացնում են սեպագիր աղբյուրների տվյալները։ Այս երկու խումբ աղբյուրների համադրումը հիմք է տվել ենթադրելու Իսուվայի և խեթական արքայատոհմերի միջև եղած ազգակցական հարաբերություններ[5]։ Ստորև ներկայացնենք վերոհիշյալ կնիքների վրա պահպանված անձնանունները և դրանց կցված տիտղոսները։

№ 1A: X-*SARRUMA* REX [HEROS]
№ 1B: X-*SARRUMA*
№ 2A: [X]-*SARRUMA* REX [HEROS]
Ki-lá/i/u-[x]-ha-pa MAGNUS. INFANS. MUNUS (=REGINA)
№ 2B: X-*SAR* [*RUMA*] REX [HEROS]
Ki-la/i/u-[x-ha-pa] MAGNUS. INFANS. [MUNUS] (=REGINA)

Այս կնիքների[6] վրա գրված է երկու անձնանուն.
1) X—շարրուման, արքա, [հերոս(՞)]
2) Կիլա/ի/ու[...] խապա, թագուհի
Առաջին անվան առաջին նշանի («միմյանց 45 աստիճանի թեքությամբ ուղղված երկու ձեռք») հստակ նմանակը չի հանդիպում փոքրասիական հիերոգլիֆիկայում։ Այս է պատճառը, որ հրատարակիչը պայմանականորեն անձնանունն ընթերցել է *Ari-Sarruma, ենթադրելով, որ միմյանց ուղղված ձեռքերը կարող են մեկնաբանվել որպես «տալ, տրված, նվեր»[7]։

---

[3] KBo IV 10 Rs. 29; IBoT I 34 Vs. 9, 16; մի շարք այլ տեքստերում (KBo VIII 23 Vs. 9; KBo VIII 30 Vs. 10; KBo XII 140 Vs. 4 f. և այլն) հիշատակվում են Իսուվայի արքաներ առանց անունները նշելու։

[4] Հրատարակությունը՝ H. G. Güterbock. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutep. — JNES 32, 1—2, 1973, pp. 135—147; նույնի վերանայված հրատարակությունը՝ Hittite Hieroglyphic Seal Impressions. — In: Korucutepe III, Amsterdam, 1980, p. 127ff.

[5] H. G. Güterbock. — JNES 32, p. 140.

[6] A- և B-ն նշում են նույն կնիքի երկու դաջվածքները։

[7] H. G. Güterbock. — JNES 32, p. 140f: Նրա կարծիքով, այս նշանը կարող էր գործածվել որպես գաղափարագիր խուրրիերեն ar- «տալ» բայի համար։ Ջնայած Կորուջութեփեի կնիքները գրված են փոքրասիական-լուվիական հիերոգլիֆիկայով, որտեղ սույն նշանը, ըստ գաղափարի, պիտի ընթերցվեր piya- «տալ» (արդյունքում կստացվեր Piya-sarruma), սակայն Իսուվայի արքաների խուրրիական անձնանունների առկայությունը թերևս չի բացառում հիերոգլիֆային նշանների խուրրիերեն ընթերցումը։

Երկրորդ անձնանունը վստահորեն վերականգնվում է որպես *Kilušḫepa, քանի որ դրա հստակ նմանակը՝ խուրրիական Kilušḫepa-ն, վկայված է խեթական տեքստերում[8]։ Սրա տիտղոսի մեկնաբանությունը նույնպես կասկածի ենթակա չէ—«թագուհի»։

Այսպիսով, № 2 կնիքը պատկանում է արքայական զույգին։

Կորուշութեփեի կնիքում թագուհի Կիլուշխեպայի անվան առկայությունը թույլ է տվել Հ. Գ. Գյուտերբոկին նույնացնելու Իսուվայի թագուհուն խեթական երկու սեպագիր տեքստերում[9] հիշատակվող Կիլուշխեպայի հետ[10]։ Այստեղ խեթական թագուհին (անկասկած, Պուդուխեպան, Խաթթուսիլիս III-ի կինը) երդվում է աստվածությանը նվիրաբերել մեծ քանակությամբ ընծաներ (արծաթի տեսքով), եթե Իսուվայի արքայի որդին առողջանա։ Անկասկած, այդպիսի երդում կարելի էր տալ, եթե Իսուվայի արքայազնը ազգակցական կապի մեջ գտնվեր նրա հետ։

Ներկայացնենք երրորդ կնիքը[11].

X_1 REX X_2-*SARRUMA*

Այստեղ X_1-ով տրվող հիերոգլիֆը ինչ-որ արքայական տիտղոս պիտի լինի, ըստ հրատարակչի՝ L—21=HEROS «հերոս»[12] (աքքադերեն qarradu, որը հանդիպում է ինչպես խեթական դարաշրջանի, այնպես էլ ետխեթական ժամանակաշրջանի տեքստերում)[13]։ Ինչպես և № 1 և № 2 կնիքների դեպքում, այս գծրքի անձնանվան առաջին բաղադրիչը Հ. Գ. Գյուտերբոկն ընթերցում է խուրրիերեն eḫli- «ողջույն» և առաջարկում վերականգնել *Eḫli-sarruma[14]. այսպիսի անուն է կրում խեթական սեպագիր տեքստերում Արիշարրումային Իսուվայի գահին հաջորդած արքան։

Այսպիսով, կնիքը կարելի է թարգմանել հետևյալ կերպ. «Հերոս(?) արքա Էխլի-շարրումա»։

Կորուշութեփեի մյուս կնիքները պատկանում են տարբեր անձանց, որոնց պաշտոնները, գրված լինելով չվերծանված գաղափարագրերով, առայժմ հնարավոր չէ պարզել[15]։

Այսպիսով, լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ Խաթթուսասի և Իսուվայի արքայատոհմերի միջև առնվազն մ. թ. ա. XIII դարում գոյություն են ունեցել ազգակցական սերտ կապեր։ Առայժմ չկա որևէ ուղղակի վկայություն պարզելու այդ կապերի սկզբնավորման ժամանակը։ Որպես հնարավոր ժամանակագրական վերին սահման կարելի է ընդունել մ. թ. ա. XIV դարի կեսերը՝ Սուպպիլուլիումաս I-ի կողմից Իսուվայի նվաճումը։ Չբացառելով նման հնարավորությունը, սակայն, թվում է, որ հիմքեր կան շատ ավելի ուշ ժամանակաշրջանի օգտին։

---

[8] E. Laroche. Les noms des hittites. Paris, 1966, № 579.

[9] KUB XV 1 III 48—55 & KUB XV 3 IV 5—12.

[10] H. G. Güterbock. — JNES 32. p. 139f.

[11] Նույն տեղում, էջ 137։

[12] Հիերոգլիֆային նշանների համարակալումը ըստ E. Laroche. Les hieroglyphes hittites. Paris, 1960.

[13] Այն հանդիպում է խեթական արքաներ Մուվատալլիս II-ի (Sirkeli), Խաթթուսիլիս III-ի (Taşçi), ետխեթական մի շարք լուվիական արքաների (Մելիդի և Կարգամիսի) տիտղոսաշարերում։

[14] H. G. Güterbock. — JNES 32, p. 141.

[15] Դրանք կրում են ակնհայտ խեթա-լուվիական և խուրրիական անուններ՝ Լուպակ(ա)ի (№ 6), Շաուշկացիտի (№ 4), Լուվա (№ 7), Մասամուվա (№ 11), Ցացա (№ 12)։ Համապատասխան զուգահեռի բացակայությունը թույլ չի տալիս որոշելու Մալամա անվան պատկանելությունը որևէ էթնոմշակութային արեալի (№№ 8—10)։

Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի տեքստերում կան մի շարք տեղեկություններ Խաթթիի և կախյալ երկրների միջև դինաստիական ամուսնությունների լայն պրակտիկայի մասին։

Խաթթուսիլիսի տեքստերից մեկում հայտնվում է հետևյալը[16].

«Երբ Մուվատալլիսը, մեծ արքան, մահացավ, ես, Խաթթուսիլիսս, ինձ իմ հայրական կահին նստեցրի։ Ես [Բենտեշինային] երկրորդ անգամ [Ամուր] բու երկրում (որպես արքա) հաստատեցի։ Նրա հոր տունը և արքայության գահը ես նրան հանձնեցի։ Մեր միջև [հավերժական] բարեկամություն [ես հաստատեցի]։ Իմ որդի Ներիկկաիլին Ամուրրուի արքա Բենտեշինայի դստերը կնության վ[երցրեց։ Ես] արքայա[դուստր]ը Գասսուլիյավիին Ամուրրուում, արքայական տանը՝ Բենտեշինային կնության տ[վեցի։ Ա]մուրրուում նա թագուհի է։ Ամուրրուում թագավորական իշխանությունը ապագայում իմ դստեր որդու և ծոռան ձեռքում [կլինի]»։

Նման ձեռնարկման մասին հայտնվում է Թուդխալիյաս IV-ի և Ամուրրուի հաջորդ արքա Սաուսգամուվայի (Բենտեշինայի և Գասսուլիյավիի որդին) միջև կնքված պայմանագրում[17]։ Այս նույն տեքստում նմանապես հիշատակվում է Խաթթուսիլիս III-ի քրոջ և արևմտափոքրասիական Սեխա երկրի արքայազն Մաստուրիսի ամուսնության մասին[18]։

Դինաստիական ամուսնությունների նպատակը տվյալ պատմական ժամանակաշրջանում թելադրված էր Խաթթիի առջև ծառացած արտաքին քաղաքական մեծ բարդություններով։ Մ. թ. ա. 1274 թ. Քադեշի ճակատամարտից հետո Ռամզես II-ը փորձում էր ետ վերադարձնել Սիրիայում կորցրած քաղաքական ազդեցությունը։ Նոր իշխանության եկած Սալմանասար I-ը (1263—1234 թթ.) մեծ ակտիվություն էր ցուցաբերում խեթերից կախյալ Միտաննիի և Հայկական Տավրոսի շրջաններում։ Փոքր Ասիայի արևմուտքում խեթերի ավանդական մրցակից Ախխիյավայի կողմից հովանավորվող կենտրոնախույս ուժերի գործունեությունը տարեցտարի ավելի էր ընդլայնվում։ Սրանց կարելի է ավելացնել Խաթթուսիլիսի՝ իշխանության գալու հանգամանքները[19]։

Ահա այսպիսի քաղաքական իրավիճակում հեռավոր կախյալ երկրների հետ խնամիական կապերի հաստատման անհրաժեշտությունը միանգամայն պարզ է դառնում։ Սթև Սեխան, ըստ Խաթթուսիլիսի, պիտի արգելապատնեշի դեր կատարեր արևմտյան Փոքր Ասիայում, Ամուրրուն (և Ուգարիտը)՝ Սիրիայում, ապա Իսուվան Միտաննիի հետ՝ հյուսիսային Միջագետքում՝ ընդդեմ հզորացող Ասորեստանի։ Այսպիսով, Կիլուշխեպան իսկապես կարող էր Խաթթուսիլիս III-ի և Պուդուխեպայի դուստրը լինել[20]։

Այժմ փորձենք քննարկել Իսուվայի երկու արքաների կառավարման ժամանակի խնդիրը։ Հայտնի չէ ինչպես Արի-շարրումայի կառավարման սկիզբը, այնպես էլ Էխլի-շարրումայի կառավարման վերջը։ Միակ բանը, որ կարելի է պարզել քիչ թե շատ մոտավոր հաշվարկներով, առաջինի կառավարման վերջն է և երկրորդի գահակալման սկիզբը։

---

[16] KBo 18 Vs. 16—20 (*հրատարակությունը՝* E. Weidner. Politische Dokumente aus Kleinasien. Leipzig, 1923, S. 124ff).

[17] KUB XXIII 1 (*հրատարակությունը՝* C. Kühne, H. Otten. Der Šaušgamuwa-Vertrag. Wiesbaden, 1971.

[18] KUB XXIII 1. *Ինչպես Ամուրրուն և Սեխան, այնպես էլ Իսուվան Խաթթիի ամենահեռավոր կախյալ երկրներն էին և, թվում է, կարելի է ենթադրել նման քաղաքականության իրականացում նաև այստեղ։*

[19] *Մուվատալլիս II-ի մահից հետո գահ բարձրացած Ուրխի-Թեշուբը (Մուրսիլիս III) գահազուրկ էր եղել հորեղբոր՝ Խաթթուսիլիսի կողմից, որի արդյունքը երկրում ներքաղաքական մթնոլորտի ապակայունացումն էր։*

[20] H. G. Guterbock. — In: Korucutepe III, p. 129.

Այսպես, որպես մեկնակետ կարելի է ընդունել խեթա-ասորեստանյան ճակատամարտը Նիխրիյայի մոտ մ. թ. ա. 1234 կամ 1233 թ.[21], երբ Իսուվայի արքան արդեն Էխլի-շարրուման պիտի լիներ[22]։ Թուդխալիյաս IV-ի և խեթերից կախյալ Թարխունտասսայի արքա Կուրունտայի միջև կնքված պայմանագրի վերջում («Բրոնզե տախտակ»)[23] տրվող բարձրաստիճան վկաների ցուցակում Արի-շարրումայի և Էխլի-շարրումայի անունները չեն հիշատակվում[24]։ Նույն Թարխունտասսայի հաջորդ արքա Ուլմի-թեշուբի հետ կնքված պայմանագրում[25] արդեն ներկա է Արի-շարրուման՝ պատվավոր հինգերորդ տեղում[26]։ «Բրոնզե տախտակը» պիտի կազմված լիներ Թուդխալիյաս IV-ի կառավարման սկզբներին (մոտավորապես մ. թ. ա. 1240-ական թվականների վերջերին)։ Իսկ քանի որ դրանից որոշ ժամանակ անց խաթիում ընթացել է քաղաքացիական պատերազմ Թուդխալիյասի և Թարխունտասսայի արքա Կուրունտայի միջև, որից հետո է միայն Ուլմի-թեշուբը փոխարինել իր եղբորը՝ Կուրունտային և կնքվել Թուդխալիյաս—Ուլմի-թեշուբ պայմանագիրը, ապա, բնական է ենթադրել, որ «Բրոնզե տախտակից» հետո կարող էր մի քանի տարի անցած լինել։

Ասվածը թույլ է տալիս ենթադրելու, որ Էխլի-շարրումայի դահակալումը Իսուվայում հազիվ թե Նիխրիյայի ճակատամարտից շատ առաջ տեղի ունենար։ Էխլի-շարրումայի կառավարման սկիզբը որոշելու հարցում հետաքրքրություն է ներկայացնում խեթերից կախյալ Միտաննի-Խանիգալբատի արքայի հայտնի նամակը՝ ուղղված խեթական արքային[27], որը սովորաբար թվագրվում է Թուդխալիյաս IV-ի կառավարման առաջին տարիներով[28]։ Սակայն այժմ, երբ «Ուլմի-թեշուբի պայմանագիրը» թվագրվում է Թուդխալիյաս IV-ի կառավարման շրջանով (նախկինում՝ Խաթթուսիլիս III-ի), ընդ որում «Բրոնզե տախտակից» առնվազն մի քանի տարի անց, ապա Միտաննիի արքայի վերոհիշյալ նամակը նույնպես անհրաժեշտ է թվագրել ավելի ուշ ժամանակով։ Ամենայն հավանականությամբ, այն կարող էր դրվել Սալ-

---

[21] A. K. Grayson. ARI I, §§ 773—783; S. Lackenbacher. Nouveaux documents d'Ugarit. Une lettre royale RA 76, 1982, p. 141ff. (ասորեստանյան աղբյուրներ), KBo IV 14; KUB VIII 23 (խեթական աղբյուրներ)։

[22] Այս ենթադրության հիմքը KBo IV 14 IV 7-ում որպես Թուդխալիյաս IV-ի օգոնենտ հիշատակվող Ehli-LUGAL-ն է, որը Ի. Զինդերը ընթերցում է Ehli-sarruma (The Battle of Nihriya and the End of the Hittite Empire. ZA 75, 1985, p. 114ff), ինչպես նաև Միտաննի-Խանիգալբատի արքա Շաթթուարա II-ի նամակը, ուղղված Թուդխալիյաս IV-ին (IBoT I 34), որտեղ հիշատակվում է Իսուվայի արքա Ehli-sarruma-ն (հրատարակությունը՝ H. Klengel. Orientalia 32, fasc. 3, 1963, S. 281f.)։ Նախորդ ուսումնասիրողների պես Ի. Զինգերն էլ այն կարծիքին է, թե IBoT I 34-ը գրված է Թուդխալիյաս IV-ի կառավարման սկզբներին (ZA 75, 1985, p. 115), սակայն «Ուլմի-թեշուբի պայմանագրում» Իսուվայի արքա Արի-շարրումայի ներկայությունը ստիպում է այս տեքստը թվագրել առնվազն 1230-ական թթ. կեսերով (տե՛ս ստորև տեքստում)։

[23] O. Otten. Die Bronzetafel aus Bogazkoy. Ein Staatsvertrag Tuthalijas IV. Wiesbaden, 1988.

[24] Թուդխալիյաս IV-ի ժամանակաշրջանի տեքստերում Էխլի-շարրումա անունը հանդիպում է երկու անգամ (բացի KBo IV 14-ի Ehli-LUGAL-ից)՝ 1) «արքայազն Էխլի-շարրումա» (DUMU. LUGAL) — «Բրոնզե տախտակում», 2) «լրաբեր Էխլի-շարրումա» (LÚ mar siprl)—IBoT I 34-ում։ Դրանցից ոչ մեկն, անկասկած, Իսուվայի արքան կամ արքայազնը չէր կարող լինել։

[25] KBo IV 10 (հրատարակությունը՝ J. Garstang and O. R. Gurney. The Geography of the Hittite Empire. London, 1959, pp. 66—69).

[26] KBo IV 10 Rs. 29.

[27] Հրատարակությունը՝ H. Klengel. — Orientalia 32, fasc. 3, 1963, S. 280ff.

[28] Տե՛ս ծան. 23 և ստորև տեքստում։

մանասար I-ի կառավարման վերջերին, եթե ոչ Թուկուլթի-Նինուրտա I-ի (1234/3—1197 թթ.) կառավարման սկզբին՝ Նիխրիյայի ճակատամարտի նախօրեին։

Բանն այն է, որ այս տեքստում, որտեղ Միտաննիի արքա Շաթթուարա II-ը[29] հայտնում է ասորեստանյան սպառնալիքի հնարավորության մասին, հիշատակվում է Իսուվայի արքա Էխլի-շարրուման։ Ինչպես նշվեց վերը, «Ուլմի-թեշուբի պայմանագրում» Էխլի-շարրուման դեռևս Իսուվայի արքան չէր, ուրեմն այս նամակը պիտի հստակորեն թվագրել վերոհիշյալ պայմանագրի և Նիխրիյայի ճակատամարտի միջև ընկած ժամանակահատվածով, այսինքն, մոտավորապես 1230-ական թթ. կեսերով։

ԻՍՈՒՎԱՆ ԵՎԱԹԹԻՆ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայտնի է, որ մ. թ. ա. 60-ական թթ. խեթա-ասորեստանյան հարաբերությունները սկսում են տարեցտարի սրվել, կապված խեթերից կախյալ Միտաննի-Խանիգալբատի և Հայկական Տավրոսի լեռնային երկրների նկատմամբ Ասորեստանի ունեցած նկրտումների հետ։ Այս մասին կարելի է դատել Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի նամակագրությունից Բաբելոնի արքա Կադաշման-Էնլիլ II-ի[30], Ասորեստանի արքաներ Սալմանասար I-ի[31] և Թուկուլթի-Նինուրտայի[32] հետ։ Ենթադրվում է, որ գլխավորապես Ասորեստանի ռազմաքաղաքական ակտիվությամբ էր պայմանավորված մ. թ. ա. 1258 թ. Խաթթուսիլիս III-ի և Ռամզես II-ի միջև խաղաղության պայմանագրի կնքումը[33]։

Վերը կարծիք հայտնվեց, որ Սալմանասար I-ի կողմից խեթահպատակ Միտաննի ձեռնարկած արշավանքը, ամենայն հավանականությամբ, կարելի է թվագրել նրա կառավարման վերջին տարիներով։ Մասնագիտական գրականության մեջ այս արշավանքի հետևանքները սովորաբար ներկայացվում են որպես Միտաննիի կորուստ խեթական տերության համար, այստեղի իշխող դինաստիայի անկում[34]։ Սակայն հիմքեր կան ենթադրելու, որ Ասորեստանի հաջողությունը Միտաննիում անցողիկ է եղել։ Խնդիրը պարզելու համար ներկայացնենք Սալմանասարի՝ սույն արշավանքը նկարագրող տեքստը և դրան առնչվող որոշ այլ գրավոր աղբյուրներ։

«...Ես արշավեցի Խանիգալբատ, ես բացեցի ամենադժվար արահետները (և) անցումները։ Շաթթուարան՝ Խանիգալբատի արքան, խեթերի և ախլամու-արամեացիների օգնությամբ գրավեց իմ ճանապարհին գտնվող ան-

---

29 Նամակի հեղինակի ինքնությունը ենթադրվում է, ելնելով Սալմանասար I-ի՝ դեպի Խանիգալբատ ձեռնարկած արշավանքի մասին պատմող տեքստից (A. K. Grayson. ARI I, § 530), որտեղ հիշատակվում է Շաթթուարան որպես Խանիգալբատի արքա։

30 KBo I 10 + KUB III 72 (հրատարակությունը՝ A. Hagenbuchner. Die Korrespondenz der Hethiter. Bd. II. Heidelberg, 1989. Nr. 204, S. 281—300); նաև Խաթթուսիլիսի նամակագրությունը Կադաշման-Էնլիլի Խնամակալ Բաբու-ախու-իդդինայի հետ՝ KUB XXIII 92 և KUB XXIII 103 (հրատարակությունը՝ H. Otten. Ein Brief aus Hattusa an Babu-aḫu-iddina. — AfO 19, 1959—1960. S. 39ff.).

31 KBo I 14 (հրատարակությունը՝ A. Goetze. Kizzuwatna and the Problem of Hittite Geography. New Haven, 1940, pp. 27ff; KBo XVIII 24 (հրատարակությունը՝ A. Hagenbuchner. Ibid., № 188, S. 241ff).

32 KUB III 73 (հրատարակությունը՝ E. Weidner. Die Inschriften Tukulti-Ninurtas I und seiner Nachfolger. — AfO Beiheft 12. Graz, 1959, Text 36); KBo XVIII 25 (A. Hagenbuchner. Ibid., № 189).

33 История древнего Востока (под ред. Г. М. Бонгард-Левина). Часть II, М., 1988, с. 151.

34 История древнего Востока. 1988, с. 103; J. M. Munn-Rankin. Assyrian Military Power, c. 1300—1200 B. C. — In: CAH II, ch. XXV, p. 10f.

ցումները և ջրատեղիները։ Երբ իմ զորքը ծարավ էր և հոգնած, նրանց զորքը կատաղի հարձակում սկսեց ողջ ուժով։ Բայց ես հակահարված տվեցի և պարտության մատնեցի նրանց։ Ես կոտորեցի անհաշիվ թվով նրանց զորքից։ Ինչ վերաբերում է նրան (Շաթթուարային—Ա. Ք.), ես հետապնդեցի նրան դեպի արևմուտք՝ նետասլաքի ծայրին։ Ես մորթեցի նրանց ամբոխները, (բայց) 14 400 հոգու (որ մնացել էին) կենդանի կուրադրի (և) գերեվարեցի։ Ես գրավեցի նրա ինը ամրացված պաշտամունքային կենտրոնները, (ինչպես նաև) քաղաքը, որտեղից նա կառավարում էր, և նրա 180 քաղաքները վերածեցի ավերակների...»[35]։

«Այդ ժամանակ ես գրավեցի քաղաքները Տայիդուից մինչև Իրրիդու, ողջ Քաշիյարի լեռները դեպի Էլուխաթ, Սուդու ամրոցը, Խարրան ամրոցը դեպի Կարքեմիշ, որը Եփրատի ափին է։ Ես իշխեցի նրանց երկրի վրա, բայց հրդեհեցի նրանց քաղաքները»[36]։

Դեռ այս տեքստի հրատարակիչն է ուշադրություն դարձրել այն հանգամանքի վրա, որ վերոհիշյալ արշավանքի նկարագրության երկրորդ հատվածը (Տայիդուից մինչև Կարքեմիշ) բառացի կրկնում է Սալմանասարի նախորդ Ադադնիրարի I-ի տեքստը, որտեղ հաղորդվում է դեպի Խանիգալբատ կազմակերպած արշավանքի մասին[37]։ Այդ է պատճառը, որ նա, ինչպես և Գ. Վիլհելմը[38], հակված է կասկածի տակ առնելու դրա հավաստիությունը։

Որո՞նք են Սալմանասարի ենթադրյալ հաջողության կասկածելիության կողմանները։ Բացի վերը նշված տեքստային կրկնության փաստից, ուշադրության է արժանի Սալմանասարի հաջորդ Թուկուլթի-Նինուրտա I-ի այն հաղորդումը, ըստ որի ողջ Սուբարի երկիրը, Քաշիյարի լեռները՝ մինչև Ալզի, իր հոր օրոք ապստամբել էին և հարկ չէին վճարում[39]։ Նույն տեքստում ասվում է, որ այդ երկրները Թուկուլթի-Նինուրտայի «պատժիչ» արշավանքի պահին միավորված էին մեկ միասնական իշխանության ներքո։ Այնուհետև, Սալմանասարի վերոհիշյալ տեքստը պարզորոշ կերպով վկայում է այն մասին, որ Խանիգալբատի արքան չի դերեվարվել, այլ հեռացել է երկրի արևմտյան շրջաններ[40]։

Ի մի բերելով կարելի է ներկայացնել իրադարձությունների հետևյալ պատկերը։ Սալմանասարի կառավարման վերջին շրջանում Միտաննիի վրա Ասորեստանի ձեռնարկած հարձակումը ավարտվել է դրա տարածքի (կամ մի մասի) բնակավայրերի ավերածությամբ։ Արշավանքից որոշ ժամանակ անց երկիրը կրկին անհնազանդություն է դրսևորել և միավորվել հարևան երկրների հետ (Սուբարի երկրներ)։ Վերջին հանգամանքը լուրջ ուշադրության է արժանի այն առումով, որ ստիպում է ենթադրել Թուկուլթի-Նինուրտայի գահակալման պահին Քաշիյարի լեռների և Տավրոսի շրջանի խուրրիական երկրների հակաասորեստանյան միության ձևավորում։ Եթե նկատի ունենանք, որ մ. թ. ա. 1234/3 թ., Նիխրիյայի ճակատամարտի ժամանակներում Թուկուլթի-Նինուրտան մեկը մյուսի ետևից ասպատակել է Քաշիյարի շրջանում գտնվող երկրները (Կադմուխի) և դրանց հյուսիս-արևելքից

---

35 A. K. Grayson. ARI I, § 530.

36 Նույն տեղում, § 531։

37 Նույն տեղում, էջ 83, ծան. 178։

38 G. Wilhelm. The Hurrians. Warminster, 1989, p. 40.

39 A. K. Grayson. ARI I, § 693.

40 Գ. Վիլհելմի կարծիքով (The Hurrians, p. 41), Սալմանասարի վերոհիշյալ արշավանքից հետո Միտաննի-Խանիգալբատի խուրրիական դինաստիան դադարել է նաև մ. թ. ա. XII դարում։ Նման հնարավորության օգտին է վկայում մ. թ. ա. XIII դարի վերջերով—XII դարի սկզբներով թվագրվող ասորեստանյան մի տեքստ (BM 121057), որտեղ հիշատակվում է «Խանիգալբատի արքա Արի-Թեշուրը» (A. R. Millard. Fragments of Historical Texts from Nineveh; Middle Assyrian and Later Kings. Iraq, vol. XXXII, Pt. 2, 1970, p. 171f).

հարող Ալզին[41], ապա, թերևս, հնարավոր է ենթադրել Ասորեստանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում ընկած մեծ թվով երկրների հզոր հակաասորեստանյան դաշինք։ Իսկ դա կարող է նշանակել, որ Իսուվան խեթերի միակ արդելապատնեշը չէր ընդդեմ Ասորեստանի, և նրանից բաժանված էր «Սուբարի երկրների» շղթայով։ Միտաննիի խեթամետ դիրքորոշումը Սալմանասարի կառավարման վերջերին, գուցե, թույլ տա ենթադրելու խեթա-սուբարական դաշնակցային հարաբերություններ։

Ահա մոտավորապես այսպիսին էր քաղաքական իրավիճակը Իսուվային հարավից անմիջականորեն հարող Միտաննի-Խանիգալբատում և հարևան շրջաններում մ. թ. ա. 1234/3 թ. սահմաններում։

1980-ական թթ. ի հայտ եկավ ուսումնասիրվող ժամանակաշրջանի և Իսուվայի պատմության վերաբերյալ մի նոր գրավոր աղբյուր, որը թույլ տվեց պարզելու այստեղ տեղի ունեցած որոշ կարևոր քաղաքական իրադարձություններ։

Մինչև 1982 թ. հայտնի ասորեստանյան տեքստերը բավական ընդարձակ նյութ էին պարունակում Թուկուլթի-Նինուրտայի կառավարման առաջին տարում կազմակերպված արշավանքների մասին դեպի հյուսիս՝ Քաշիյարիից մինչև Վանա լճի շրջան[42]։ Հայտնի էր նաև, որ ըստ այդ նույն աղբյուրների, ասորեստանյան զորքը Եփրատի արևմտյան ափից գերեվարել էր 28 800 «խեթական երկրի բնակիչների»[43]։ Ուգարիտից գտնված աքքադերեն նամակը[44] նոր լույս սփռեց այս արշավանքների հետ կապված մի կարևոր իրադարձության վրա։

Նամակը գրված է Թուկուլթի-Նինուրտայի կողմից Ուգարիտի արքա Ամմուրապիին։ Այստեղ ներկայացված է Նիխրիյայի ճակատամարտի նախօրեին Թուդխալիյաս IV-ի և Թուկուլթի-Նինուրտայի միջև ընթացած դիվանագիտական բախումների համառոտ պատմությունը[45]։ Երկու պետությունների միջև ընկած սահմանային գոտում ծագած տեղական բնույթի ընդհարումները ի վերջո վերածվում են խոշոր ռազմական բախման։ Նիխրիյա քաղաքից[46] ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտն ավարտվում է ասորեստանցիների հաղթանակով։ Իրավացիորեն ենթադրվում է, որ Նիխրիյայում ունեցած հաջողությունից հետո միայն ասորեստանյան արքան կարող էր լայնածավալ արշավանքներ ձեռնարկել հյուսիսի լեռնային շրջաններում։

Նիխրիյայի ճակատամարտից որոշ ժամանակ անց գրված երկու խեթական տեքստերում կարևոր տեղեկություններ են հաղորդվում վերոհիշյալ իրադարձություններում Իսուվայի խաղացած դերի մասին։

Ի. Զինգերի կողմից համոզիչ փաստարկներով Թուդխալիյաս IV-ին վերագրվող մի տեքստում[47] խեթական արքան մեղադրում է իր օպոնենտին դավաճանության մեջ. «Երբ (իրադրությունը) ինձ համար բարդացավ, դու բեղ ինձնից հեռու պահեցիր։ Դու իմ կողքին չէիր։ Միթե ես Նիխրիյայիր միայնակ չհեռացա։ Երբ էր պատահել, որ թշնամին ինձնից վերցներ խուրրի

---

41 Այս արշավանքների երթուղիների և գրավված երկրների տեղադրության մասին տե՛ս Н. В. Арутюнян. Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 21 сл.

42 A. K. Grayson. ARI I, § 464ff.

43 Նույն տեղում, §§ 773, 783։

44 S. Lackenbacher. RA 76, 1982, p. 141ff.

45 Տե՛ս I. Singer. ZA 75, 1985, p. 100ff.

46 Ամիդ-Դիարբաքրից հյուսիս-արևելք՝ հին հայկական Նփրկերտ (Մայաֆարկին-Սիլվան) (I. M. Diakonoff and S. M. Kashkai. Geographical Names According to Urartian Texts [=RGTC 9]. Göttingen, 1981; p. 60f.; I. Singer, ZA 75, 1985, p. 106).

47 KBo IV 14 (I. Singer, Ibid., p. 109ff.).

երկրները, եթե ես միայնակ չմնայի Ալաթարմայում[48]։ Այնուհետև. «Հավատարիմ ծառա եղիր արքային։ Մի ցցիր վիզդ։ Նախկինում, երբ BU. LUGAL-aš-ը մահացավ, դու ցցեցիր վիզդ։ Դա չպիտի նորից կրկնվի։ Թող (այս դեպքը) քեզ համար երդում լինի»[49]։

Մեկ այլ, վնասված տեքստում[50] Նիխրիյայի ճակատամարտի շրջանում Խուվալի արքայի պահվածքը լուսաբանող տեղեկություններն ավելի հստակ են. «[...]երբ նա գա այստեղ, [.....] ետևից մենք կհարձակվենք նրա վրա։ Բայց [այ]ժմ, երբ Խուվալի արքան եկավ այստեղ, նրանք նրան շրջեցին։ [Եվ] նա նույնպես ընկղմվեց(՞) ապստամբության մեջ։ Խուվալի արքան այլևս չի հետևում Արևին։ Թող թագուհին՝ Տիրուհին, նույնպես տեղեկանա։ Տիրուհիս՝ թագուհիս, ինչ անեմ ես։ Արևը այս տեղ[ում] Արցա-[վա երկրում...]»։

Երկու տեքստերի համադրումը թույլ է տալիս առաջարկելու իրադարձությունների հետևյալ հնարավոր զարգացումը։ Վերինեփրատյան ճակատում ռազմական գործողությունների իրականացման պարտականությունը խեթական կողմից դրված է եղել Թուդխալիյասի զորավարի՝ երկրորդ տեքստի հեղինակի վրա։ Այդ պահին արքան գտնվում էր Արցավայում (արևմտյան Փոքր Ասիա)։ Ըստ ծրագրի, խեթա-խուվլյան միացյալ զորքը պիտի անսպասելի հարձակվեր ասորեստանցիների վրա, սակայն, պայմանավորված վայր հասնելուց հետո, Խուվալի արքան միանում է ինչ-որ հակախեթական ուժերի և չի մասնակցում ճակատամարտին. արդյունքում խեթական զորքը պարտվում է։ Երկրորդ տեքստի նյութը թույլ չի տալիս պարզելու վերը հիշատակված հակախեթական ուժերի ինքնությունը։

Ինչպես արդեն նկատվել է[51], վերը բերված տեքստային հատվածները վկայում են խեթա-ասորեստանյան բախման շրջանում Խուվալի արքա էխլի-շարրումայի կողմից իր սյուզերենի նկատմամբ պարտավորությունների չկատարման մասին։ Համապատասխան նյութի բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել նման դիրքորոշման դրդապատճառը։ Իհարկե, կարելի է ենթադրել, որ ասորեստանյան առաջխաղացման պայմաններում Խուվալի արքան նախընտրել է չմասնակցել պատերազմին, որպեսզի ուժեղ չտա իր սահմանների մերձակայքում գործող ասորեստանցիներին ասպատակելու երկիրը։ Դատելով KBo IV 14-ից, նախկինում էլ էխլի-շարրուման արդեն անհնազանդություն էր դրսևորել։ Կապված էին արդյոք երկու դեպքերն էլ Ասորեստանի հետ հարաբերությունները շտրելու ցանկության հետ, դժվար է ասել։ Չբացառելով նման բացատրությունը, որը կարելի էր հիմնավորել նաև այն փաստով, որ Թուկուլթի-Նինուրտայի կողմից ասպատակված երկրների ցուցակում Խուվալի անունը չի հիշատակվում, այնուամենայնիվ, թվում է, պատճառներն ավելի խորն էին, կապված խեթական տերության ներքաղաքական ասպարեզում ընթացող պրոցեսների հետ։

Նիխրիյայի ճակատամարտից մի քանի տարի առաջ Խաթթիի ներսում բռնկված քաղաքացիական պատերազմը չէր կարող բացասաբար չանդրադառնալ տերության վարչաքաղաքական կայունության վրա։ Խոսքը վերաբերում է հատկապես ծայրամասային երկրների կենտրոնախույս միտումներին, որոնց ակտիվացումը պիտի հանգեցներ անջատողական տրամադրու-

---

48 Այս քաղաքը խեթական տեքստերում հիշատակված է երեք անգամ (KUB II 1; KUB XXIII 72 և KBo IV 14) և մոտավորապես տեղադրվում է Խուվալի և Պախխուվալի մերձակայքում (Ph. H. J. Houwink ten Cate. The Records of the Early Hittite Empire (c. 1450--1380 B. C.). Istanbul/Leiden, 1970, p. 65); KBo IV 14-ը կարծես թույլ է տալիս այն փնտրելու Նիխրիյայից ոչ հեռու, այսինքն, Խուվալից հարավ։

49 KBo IV 14 III 38—41; Պարզ չէ դաղափարագրով գրված այս անձնանվան հնչյունական տեսքը։

50 KUB VIII 23 13′—14′.

51 I. Singer, ZA 75, 1985, p. 109ff.

թյունների խորացմանը։ Քաղաքացիական պատերազմից հետո տերության մի շարք երկրների նկատմամբ ունեցած վերահսկողության թուլացման կամ վերացման բավական թվով օրինակներ կարելի է բերել։

Ամենից առաջ տարօրինակ է Նիխորիյայից քիչ ավելի վաղ կնքված «Ուլմի-թեշուբի պայմանագրում» արևմտափոքրասիական երկու երկրների արքաների բացակայությունը (Սեխա և Միրա), որոնք ներկա են եղել Թարխունտասսայի նախորդ արքա Կուրունտայի հետ կնքված պայմանագրին («Բրոնզե տախտակ»)։ Տարօրինակ է հատկապես Սեխայի բացակայությունը, մի երկրի, որը, Մուրսիլիս II-ի ժամանակներից սկսած, ավանդաբար հատուկ ընդգծված խեթամետ դիրքորոշում է ունեցել։ Հավանաբար, Սեխայի արքա Թարխունարադուի ապստամբության ճնշման մասին պատմող Թուդխալիյաս IV-ի տեքստը[52] պիտի թվագրել այս ժամանակաշրջանով։

Խաթթուսասի Մեծ Արքայի հեղինակության անկման հաջորդ վկայությունը մեկ այլ կախյալ երկրի՝ Ուգարիտի արքա Ամմուրապիի նամակագրությունն է Թուկուլթի-Նինուրտա I-ի հետ (տե՛ս վերը, ծանոթ. 44) Նիխորիյայի ճակատամարտից անմիջապես հետո։ Քաղաքական հակառակորդի անմիջական գերիշխանության տակ գտնվող և Ասորեստանի հետ ընդհանուր սահման չունեցող փոքրիկ Ուգարիտի արքայի հետ նամակագրությունը հնարավոր էր միայն խեթական տերությունում տիրող խառնաշփոթ իրավիճակում։

Վերը ներկայացված քաղաքական ենթատեքստում Իսուվայի անհնազանդության դրդապատճառը կարող է որոշակիորեն պարզվել։

Ինչպես, Իսուվայի անջատողական դիրքորոշումը խեթա-ասորեստանյան հարաբերությունների սրման ժամանակաշրջանում դեռևս չի նշանակում, որ այդ երկիրը անվերադարձ խզել էր կապերը Խաթթիի հետ։ KBo IV 14-ի դոյությունն ինքնին արդեն վկայում է այն մասին, որ հետագայում նրանց միջև եղած նախկին հարաբերությունները կարող էին վերականգնվել կամ, առնվազն, միջադեպը հարթվել էր և Թուդխալիյաս IV-ը շարունակում էր Իսուվան դիտել որպես իր կախյալ երկիրը արևելքում։ Տեքստի պակասավոր բնույթը թույլ չի տալիս պարզելու, թե ինչ հանգամանքներ էին նախորդել KBo IV 14-ի կազմմանը, որևէ պատժիչ միջոցառում, թե խեթական արքան սահմանափակվել էր միայն դիվանագիտական դեմարշով։ Թուդխալիյաս IV-ի կառավարման վերջին շրջանը (Նիխորիյայից հետո) հագեցած է նախկինում կախյալ երկրներում քաղաքացիական պատերազմի ընթացքում ակտիվացած կենտրոնախույս միտումների ճնշման ուղղությամբ անցկացված պատժիչ միջոցառումներով։ Այսպես, ճնշվեց Սեխայի արքա Թարխունարադուի ապստամբությունը (տե՛ս վերը), դրավվեց արևմտյան Փոքր Ասիայում հակախեթական ուժերի հենարան հանդիսացող Միլլավանդան (Միլեթ), իր գահին վերահաստատվեց ապստամբության հետևանքով գահազրկված Վիլուսայի (Տրոադայում) խեթամետ արքա Վալմուն[53]։ Թուդխալիյաս IV-ի կառավարման այս ժամանակահատվածի ընթացքում վերականգնվում է խեթական տերության տարածքային ամբողջականությունը, որ զգալիորեն սասանվել էր 1230-ական թթ.։

ԻՍՈՒՎԱՆ ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Շնորհիվ նորահայտ գրավոր և հնագիտական նյութերի, 1980—90-ական թվականներին էապես փոխվեցին նախկին պատկերացումները խեթական տերության անկման եղանակի, ընթացքի և դրա հետևանքների վերաբերյալ։ Այժմ մասնագետների մեծ մասը Խաթթիի անկումը հակված է դիտելու ոչ որպես այդ վիթխարի տերության ոչնչացում ռազմական ճանապարհով (հա-

[52] KUB XXIII 13.
[53] KBo XIX 55 + KUB XLVIII 90.

ռևան երկրների և ժողովուրդների հարձակումներ), այլ ներքին քայքայիչ պրոցեսների հետևանքով տեղի ունեցած տրոհում[54]։ Ենթադրվում է, որ ներքաղաքական ճգնաժամի արդյունքում վերացել է կենտրոնական իշխանություն, իսկ տերության որոշ շրջաններում նախկինում եղած քաղաքական միավորները՝ Թարխունտասսան (Փոքր Ասիայի հարավում) և Կարգամիսը (Հյուսիսային Սիրիայում) շարունակել են գոյատևել, հանդիսանալով Խեթիի քաղաքական ավանդույթների ժառանգորդները[55]։ Ինչ վերաբերում է տերության մյուս շրջաններին (արևմտյան Փոքր Ասիա, թերակղզու կենտրոն), ապա մ. թ. ա. XII դարի սկզբներին Փոքր Ասիայի տարբեր շրջաններում ընթացած էթնիկական տեղաշարժերը և ժողովրդագրական փոփոխությունները միաժամանակ խոչընդոտել են պետական կազմավորումների ձևավորմանը։

Իսկ ինչպիսի՞ն էր իրադրությունը Խուվայի գրաղեցրած տարածքում և դրա մերձակա հարևանությամբ։ Այս հարցի քննարկումը ներկայումս գերազանցապես կախված է Էլյազղի շրջանում 1960—70-ական թթ. Կեբանի ջրամբարի շինարարությանը նախորդած ինտենսիվ հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ եկած նյութերի[56] պատմագիտական իմաստավորումից։ Վերջինս միանշանակ վկայում է մ. թ. ա. XII դարում Խուվայում տեղի ունեցած քաղաքական և մշակութային արմատական փոփոխությունների օգտին։ Որո՞նք են այսպիսի մեկնաբանության փաստացի վկայությունները։

Խուվայի տարածքում գտնվող առավել խոշոր երկու հնավայրերի՝ Կորուջութեփեի և Նորշունթեփեի, ինչպես նաև մի շարք այլ վայրերի (Թեփեջիկ, Դեգիրմենթեփե, Քյոշկերբաբա, Իմիկուշաղը, Դիլեկթեփե, Թյուլինթեփե և այլն) վաղ երկաթեդարյան շերտերը ի հայտ են բերում հետևյալ պատկերը.

1) ուշբրոնզեդարյան բնակավայրերի և բնակչության քանակի կտրուկ նվազում

2) որոշ բնակավայրերում կան փոքր ավերածությունների հետքեր (Նորշունթեփե, Կորուջութեփե)

3) նոր, պարզունակ մշակույթի կրողների զանգվածային ներհոսք

4) վաղ երկաթեդարյան բնակավայրերի քանակական աճ նախորդ շրջանի համեմատ (շուրջ 50 տոկոս)

5) նոր մշակույթի բնորոշ առանձնահատկություններն են՝ ա) գերազանցապես անորակ կավից, առանց բրուտի անիվի կամ դանդաղ անիվի վրա

---

54 J. D. Hawkins. Kuzi-Tešub and the „Great kings" of Karkamis. —AnSt 38, 1988, p. 99ff.; Idem. The End of the Bronze Age in Anatolia: New Light from Recent Discoveries. — In: AIA 3. London, 1994, p. 91ff.; H. G. Guterbock. Survival of the Hittite Dynasty. — In: The Crisis Years. The 12th Century B. C.: From the Danube to the Tigris. Dubuque, 1992, p. 53ff.: J. Yakar. Anatolian Civilization Following the Disintegration of the Hittite Empire. — Tel Aviv 20, 1993, p. 3ff.: Խեթական տերության անկման գործընթացում արտաքին գործոնի երկրորդական դերի մասին տե՛ս Ա. Վ. Քոսյան. Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին.—«ՊԲՀ», 1994, № 1—2, էջ 247—252։ Նույնի՝ «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը.—«ՊԲՀ», 1996, 1—2, էջ 207—214։

55 Խեթական տերության տրոհումից հետո գոյատևած վերը նշված երկու պետություններին, թերևս, կարելի է ավելացնել ևս մեկը՝ Մելիդը արևելյան Փոքր Ասիայում։

56 Պեղումների արդյունքներն ամփոփված են մի շարք հրատարակություններում՝ Korucutepe. I—III (ed. M. N. van Loon). Amsterdam, 1975—1980; G. Korbel. Die Spatbronzezeitliche Keramik von Norşuntepe. Hannover, 1985; H. Hauptmann. Norsuntepe. Historische Geographie und Ergebnisse der Grabungen 1968/69. — IM 19—20, 1969—1970, S. 21—78 և այլն։

պատրաստված և փոքր տեսականիով ներկայացված խեցեղեն[57], բ) շինությունների պարզունակություն (կառուցման միասնական պլանավորման բացակայություն), Նորշունթեփեում ծիսական և վարչական կառույցների բացակայություն[58]։

Ասվածին պիտի ավելացնել նաև, որ նորամուտ մշակույթը ոչ մի առընչություն չունի Իսուվայի հնավայրերի ուշբրոնզեդարյան շերտերի հետ։ Բացի այդ, Իսուվայի վաղ երկաթեդարյան մշակույթն ընդգրկում է շուրջ 150 տարի, դառնելով շերտի հաստությունից[59]։

Իսուվայում մ. թ. ա. XII դարում հայտնված նոր մշակույթի աղբյուրի խնդիրը առայժմ վերջնական լուծումից հեռու է, չնայած արդեն բավական հիմնավոր ուսումնասիրություններ են կատարվել այս ուղղությամբ։ Մասնավորապես պարզ է, որ նոր խեցեղենի ստեղծողները չէին կարող այստեղ հայտնվել Եփրատից արևմուտք ընկած շրջաններից, այսինքն, Փոքր Ասիայից[60]։ Դրա ամենամոտ զուգահեռները հնագետները հակված են փնտրելու Անդրկովկասում՝ Կարմիր բլուրի, Մեծամորի և այլ հնավայրերի մինչուրարտական շերտերում[61]։ Նմանատիպ խեցեղեն է վկայված նաև Հայկական լեռնաշխարհի և հյուսիս-արևմտյան Իրանի վաղ և միջին երկաթեդարյան մի շարք հնավայրերում՝ Տիլլե Հյոյուքում (Ադըյամանի մոտ)[62], Դիլկայա Հյոյուքում (Վանա լճի հարավ-արևելյան ափին), Գյուղելովայում, Պուլուրում (Էրզրումի մոտ), Գեոյթեփեում (հյուսիս-արևմտյան Իրան) և Հասանլուում[63]։

Իսուվայի վաղ և միջին երկաթեդարյան խեցեղենի Անդրկովկասյան աղբյուրի մասին տեսակետը դեռևս համակողմանի ուսումնասիրման կարիք ունի թեկուզ այն պատճառով, որ վերջինիս հնավայրերի համապատասխան խեցեղենի հստակ թվագրումը այսօր բացակայում է։ Սակայն, հաշվի առնելով Վերին Եփրատի շրջանում նոր խեցեղենի մեծ քանակությունը, ինչպես նաև դրա լայն տարածումը Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում[64], պիտի ընդունել, որ այս ուղղությամբ հետագա ուսումնասիրությունները կարող են միանգամայն նոր լույս սփռել լեռնաշխարհում սույն ժամանակաշրջանում ընթացած էթնոմշակութային պրոցեսների վրա։

Մինչև վերոհիշյալ երևույթների պատմագիտական իմաստավորմանն անցնելը նպատակահարմար է փորձել դրանք դիտել Առաջավոր Ասիայում և էգեյան ծովի ավազանում նույն ժամանակներում տեղի ունեցած համանման երևույթների հետ փոխկապակցության մեջ։

Այսպես, ուշ բրոնզից վաղ երկաթ անցման փուլում միմյանցից տարածապես հեռու գտնվող բազմաթիվ քաղաքային կենտրոններում նկատվում են

---

57 M. M. W i n n. Phase K, the Early Iron Age. — In: Korucutepe III, 1980, p. 155.

58 K. B a r t l. Die Frühe Eisenzeit in Ostanatolien und ihre Verbindungen zu den benachbarten Regionen. — Baghdader Mitteilungen, Bd. 25, 1994. S. 476ff.

59 Նույն տեղում, էջ 479f.

60 V. S e v i n. The Early Iron Age in the Elazıg Region and the Problem of the Mushkians. — AnSt 41, 1991, p. 95.

61 M. M. W i n n. In: Korucutepe III, p. 172f.; V. S e v i n. AnSt 41, 1991, p. 96; K. B a r t l.—Baghdader Mitteilungen 25, 1994, S. 506.

62 S. B. B l a y l o c k, D. H. F r e n c h and G. D. S u m m e r s. The Adıyaman Survey: an Interim Report. — AnSt 40, 1990, p. 110ff.

63 V. S e v i n. AnSt 41, 1991, p. 95.

64 Ըստ Վ. Սեվինի (ibid., p. 97, n. 3a), Վանի հնագիտական թանգարանում կուտակված է Արարատ լեռան շրջակայքից և Պատնոսից հայտնաբերված նման խեցեղենի մեծ քանակություն։ Նույնատիպ խեցեղեն է հայտնաբերվել նաև Վանի միջնաբերդի շրջանում 1989 թ. սկսված պեղումների ընթացքում, որ թվագրվում է մինչուրարտական ժամանակաշրջանով, ավելի ստույգ՝ վաղ երկաթի դարով (V. S e v i n. The Excavations at the Van Castle Mound. — In: AIA 3. London, 1991, p. 221f.).

ընդհանուր օրինաչափություններ։ Թվարկենք դրանցից առավել լավ ուսումնասիրվածները՝ Բողազքյոյ-Խաթթուսաս, Յասսըհյոյուք-Գորդիոն, Հիսարլրկ-Տրոյա, Պելոպոնեսյան մի շարք բնակավայրեր և այլն։ Բոլոր նշված հնավայրերի անցման փուլին բնորոշ են՝ 1) ուշբրոնզեդարյան ստանդարտացված, բարձրորակ խեցեղենի ընդհատումը և նոր, պարզունակ, տնային պայմաններում պատրաստված խեցեղենի հայտնվելը, 2) փոքր գյուղատիպ բնակավայրերի առկայությունը, 3) նոր բնակչության սոցիալական կազմակերպվածության անհամեմատ ցածր մակարդակը[65]։ Տպավորությունն այնպիսին է, կարծես ուշբրոնզեդարյան զարգացած քաղաքային մշակույթը մ. թ. ա. XII դարում, առանց տևական ընդմիջման, իր տեղը զիջում է սոցիալ-քաղաքական և տնտեսական մինչպետական կամ վաղպետական զարգացման փուլ ապրող բնակչությանը[66]։ Անհամեմատ ավելի բարդ է հնից նորի անցման եղանակի լուսաբանումը։ Ի՞նչ կարող էր տեղի ունենալ. 1) քաղաքային բնակչության արտագաղթ նոր էթնոսի ճնշման տակ, 2) արտագաղթ քաղաքային բնակչության կենսագործունեության համար աննպաստ պայմանների պատճառով։ Այս խնդրի ուսումնասիրությունը համալիր մոտեցման կարիք ունի, ուստի հնարավոր չենք համարում խորանալու դրանում։ Նշենք միայն, որ Խուվայի հնավայրերի ուսումնասիրություններից ստացված նյութը թույլ է տալիս այստեղ մ. թ. ա. XII դարում նկատվող երևույթները դիտելու նույն հարթության վրա, ինչ փոքրասիական և էգեյան աշխարհների մյուս շրջանների համանման երևույթները։

Խուվայում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունները անհնար է անջատել ասորեստանյան աղբյուրներում պահպանված տեղեկություններից մ. թ. ա. XII դարի կեսերին Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազաններում ընթացած էթնիկական տեղաշարժերի վերաբերյալ[67]։ Դեռ ժամանակին Զ. Բրնիի կողմից արտահայտված կարծիքը Էլյազղի շրջանի վաղերկաթեդարյան խեցեղենի ստեղծողներին Թիգլաթպալասար I-ի հիշատակած մուշկերի հետ նույնացնելու մասին[68] այսօր, թերևս, դժվար է վիճարկել։ Անկասկած, մ. թ. ա. XII դարի կեսերին կամ քիչ ավելի վաղ դեպի Վերին Եփրատի ու Վերին Տիգրիսի ավազաններ ընթացած ժողովուրդների տեղաշարժերը բավական լայնածավալ պիտի լինեին, եթե, ըստ հնագիտական աղբյուրների, ողջ Խուվան, իսկ ըստ ասորեստանյան աղբյուրի՝ Ալզին, Պուրուկուզդին և Կադմուխիի մի մասը, ընդգրկված են եղել դրանցում։

---

[65] Տե՛ս K. Bittel. Hattusha, the Capital of the Hittites. New York, 1970, p. 137ff.; C. Blegen. Troy VII. — In: CAH, vol. 11/2, 1975, p. 161ff.; R. C. Henrickson. Continuity and Discontinuity in the Ceramic Tradition of Gordion during the Iron Age. — In: AIA 3, p. 95ff.; V. R. d'A. Desborough. The Last Mycenaeans and Their Successors. Oxford, 1964, p. 225ff.:

[66] Վաղ երկաթի դարում քաղաքային մշակույթի անկման խոսուն վկայություն պիտի դիտել Խուվայի երկու խոշոր հնավայրերից մեկի՝ Կորուջութեփեի պեղումներից ստացված ոսկրաբանական նյութի ուսումնասիրության արդյունքները (J. Boessneck, A. von den Driesch. Tierknochenfunde vom Korucutepe bei Elazig in Ostanatolien. Fundmaterial der Grabungen 1968 und 1969. — In: Korucutepe I, S. 7ff.): Դրանք անվերապահորեն վկայում են այն մասին, որ Կորուջութեփեն ընդամենը մի խղճուկ գյուղակ է եղել։ Այսպես, ուշ բրոնզ II շերտից (մ. թ. ա. XIV—XIII դարեր) հայտնի է ընտանի կենդանիների շուրջ 8700 ոսկոր, այնինչ վաղ երկաթեդարյան շերտում դրանց քանակը հազիվ հասնում է 67-ի։

[67] Նկատի ունենք Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի տեքստերում հիշատակվող մուշկերի, կասկերի և ուրումեացիների տեղաշարժերը (A. K. Grayson.—ARI II, § 12ff.):

[68] Ch. Burney. Aspects of Excavations in the 'Altinova, Elazig. — AnSt 30, 1980, p. 166.

Այսօր, թերևս, վաղ է մասնավորեցնել հիշյալ տեղաշարժերին մասնակցած ժողովուրդների էթնիկական կազմը։ Եթե նույնիսկ դրանք մի որևէ կոնկրետ էթնոմշակութային համալիրի ներկայացուցիչներ են եղել, ապա, հաշվի առնելով եկվորների պարզունակ մշակույթը, հնարավոր է ենթադրել, որ նրանք ոչ թե մի կոմպակտ էթնիկական խումբ են եղել, այլ միմյանց մոտ կանգնած ցեղերի միություն։ Ընդ որում մուշկերը կարող էին լինել միայն տեղաշարժային ալիքի՝ Կազմուխի հասած առաջապահ մասը։

Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. XII դարում ընթացած էթնիկական տեղաշարժերի ուսումնասիրումը մեծ նպաստ կբերի հայկական էթնոսի ձևավորման դարաշրջանի պատմության լուսաբանմանը։

* * *

Այսպիսով, մ. թ. ա. XII դարում Խուվայում հնագիտորեն վկայված փոփոխությունները կարելի է մեկնաբանել որպես քաղաքական, սոցիալական և մշակութային վայրէջքի փուլ, որի ընթացքում վերանում է նախորդ ժամանակաշրջանում գոյություն ունեցած պետականությունը, քաղաքային կենտրոնները վերածվում են փոքր գյուղատիպ բնակավայրերի, բնակչությունը կամ հեռանում է կամ ժամանակի ընթացքում, նոր կենսապայմանների ազդեցության հետևանքով՝ դեկրադացվում։ Թիգլաթպալասար I-ի կողմից միայն մեկ անգամ հիշատակվող Խուվան[69], անկասկած, պետականության կորուստից հետո նոր մշակույթով հագեցած մի քաղաքական միավոր պիտի լիներ, վուրկ ուշբրոնզեդարյան դարաշրջանում ձևավորված քաղաքական ավանդույթներից։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԲՀ—Պատմա-բանասիրական հանդես.

AfO — Archiv für Orientforschung.

AIA 3 — Anatolian Iron Ages 3 (eds. A. Çilingiroglu and D. H. French). London, 1994.

AnSt — Anatolian Studies.

ARI — A. K. Grayson. Assyrian Royal Inscriptions. vols. I—II. Wiesbaden, 1972—1976.

CAH — Cambridge Ancient History.

IBoT — Istanbul Arkeoloji Müzelerinde bulunan Bogazkoy Tabletleri.

IM — Istanbuler Mitteilungen.

JNES — Journal of Near Eastern Studies.

KBo — Keilsehrifttexte aus Boghazköi.

KUB — Keilschrifturkunden aus Boghazköi

OA — Oriens Antiquus.

RA — Revue d'Assyriologie.

RGTC — Repertoire Géographique des Textes Cuneiformes.

ZA — Zeitschrift für Assyriologie.

---

69 «Ես նվաճեցի Խուվան (և) Դարիան։ Ես նրանց հարկատու դարձրեցի (և) վերածեցի իմ աստծու՝ Աշշուրի հպատակների» (A. K. Grayson.—ARI II, § 24):

ИСУВА (ЦОП'К') В XIII—XII ВВ. ДО Н. Э.

А. В. КОСЯН

Резюме

В статье представлен широкий круг вопросов, касающихся истории одной из важных политических единиц Армянского нагорья—царства Исува (древнеарм. Цоп'к'): 1) Царская династия Исувы, 2) Исува в период хеттско-ассирийского противостояния во второй половине XIII в. до н. э., 3) Исува в период падения Хеттской державы. Изучение первоисточников подтверждает вывод о том, что царская династия Исувы в XIII в. до н. э., представленная двумя царями—Ари-шаррумой и его сыном Эхли-шаррумой, вероятно, была связана с хеттской династией Хаттусаса родственными узами; матерью Эхли-шаррумы могла быть хеттская принцесса—дочь Хаттусилиса III и Пудухепы Килушхепа. В 40—30-х годах XIII в. до н. э., в период внутриполитического кризиса в Хеттской империи в правление Тудхалияса IV, в политике Исувы проявляются центробежные тенденции. Во время хеттско-ассирийского соперничества за верхнеевфратские страны и Митанни-Ханигалбат (битва при Нихрии в 1234/3 г. до н. э.) царь Исувы Эхли-шаррума не выполняет свои вассальные обязательства, что приводит к потере контроля хеттов над «странами Хурри». В период древнеближневосточного кризиса XII в. до н. э. в Исуве произошли коренные этнополитические и социально-экономические сдвиги. Они отразились в депопуляции позднебронзовых центров и наплыве нового, многочисленного примитивного населения (предположительно, с севера). Основным результатом демографических перемен следует считать всеобщий политический и культурный регресс. Перемены в развитии исувского общества не являются обособленным явлением. Судя по археологическим исследованиям, регрессивные тенденции прослеживаются также в различных районах Армянского нагорья в период перехода от эпохи поздней бронзы к раннежелезному веку.

IŠUWA (TSOP'K') IN THE XIII—XII C. B. C.

A. V. KOSSIAN

Summary

The article deals with wide circle of problems concerning the history of one of the important political entitles of the Armenian Highland—the kingdom of Išuwa (=Old Arm. Tsop'k'): 1) the ruling dynasty of Išuwa, 2) Išuwa during the Hittite-Assyrian rivalry in the second half of the XIII c. B. C., 3) Išuwa during the fall of the Hittite Empire. The study of written sources proves the assumption that the ruling dynasty of Išuwa of the XIII c. B. C. represented by two kings—Ari-šarruma and his son Ehli-šarruma, perhaps, was related to the Hittite dynasty of Ḫattusas: Kilušhepa—the mother of Eḫli-šarruma was the daughter of Ḫattušilis III and Puduhepa. In the

40—30-s of the XIII c. B. C., during the political crisis in the Hittite Empire in the reign of Tudhal.yaš IV, the policy of Išuwa shows signs of disloyalty. During the Hittite-Assyrian rivalry for the Upper Euphrates countries and Mitanni-Hanigalbat (the battle of Niḫriya in 1234/3 B. C.), Eḫli-šarruma, the king of Išuwa had denied its duties of vassalhood; as a result, the Hittites had lost their control over the „Ḫurri Lands". During the XII c. B. C. Near Eastern crisis Isuwa had experienced radical ethnopolitical and socio-economic shifts—depopulation of Late Bronze Age sites and the arrival of a numerous and primitive new population (plausibly, from the north). The main result of these demographic changes was a complete political and cultural decline. The changes in the development of the society of Isuwa are not an isolated phenomenon. Archaeological investigations had revealed the same regressive tendencies also in different areas of the Armenian Highland for the period of the Late Bronze—Early Iron Age transition.